


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
աւեք է ուղղել առ

ՄԻՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԻՍԲՈՆ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տրեկն. ողջ դի. 80
» » վեցամսայ » 50
Օսար երկիրներ տարեկան Թրանք 25
» » վեցամսայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ԶԱԹԱԼ-ԹԱԳ

Ազգին այս տաճնապալի օրերուն մէջ,
սիրտերը և գլուխները քիչ մը կաղդուրելու
համար՝ կրօնական ժողովը ծիծաղաշարժ խն-
դիր մը կը դնէ իր սեղանին վրայ:

Տուամէն ետքը՝ գոմէտին, բնական է ա-
սիկայ:

Մարդիկ զարմանալի են, մինչեւ անգամ
եթէ եպիսկոպոս ըլլան:

Կրօնական ժողովը, մեր ժողովներուն ա-
մենէն լուրջը, ամենէն պատկառելին, ամենէն
խորհրդաւորը, կը մոռնայ ազգին արդի կա-
ցութիւնը, կը լքանէ սրբերը, կանգնողանայ
հոն՝ մեր հայրենի հողին վրայ չարչարող,
մեռնող մեր սիրելիները, ուշադրութիւն չըն-
թէ ուսմանը, կրթութիւնը կը զլացուին մեր
ապագայ սերունդին, պատուար մը դնել չա-
խատիր կրօնափոխութեան հոսանքին դէմ,
այո՛, այս ամենը մէկդի կը թողու և չաթալ-
թադի խնդրով մը կը սպաննէ իր ժամերը,
Պատրիարքը անհանգիստ կընէ, մամուլին տաղ-
տուկ կը պատճառէ, կը վշտայնէ իր անգամ-
ները և իր նիստերը ապարդիւն կը դարձնէ
որուն համար գերապատիւ Տոն Քիշթ մը ժո-
ղովն կառնէ կը քայլէ և կը հրաժարի:

Այդ Գեորգ կաթողիկոսն աւելցած ե-
պիսկոպոսը շատ անգամ առիթներ ունեցած
է կիրք զգալու, արժանապատուութիւնը վի-
րաւորուած տեսնելու, ազգին և կրօնին գո-
յութեան սպառնացող վտանգներուն ահա-
նատես ըլլալու երբ խորհներ, Բարթոլոմէ-
մէսներ իրենց խոշոր փորը կը պտտացունեն
Պատրիարքարանէն Դուռը և Դռնէն Պալատ,
այն ատեն ինքը՝ Օրթոդոքսի բարձանց վրայ
ապաստանած՝ իր էջմիածնէն բերած ստակնե-
րը բեղմնաւորելու կաշխատէր, և այսօր թաւ-
չապատ ոսկեղօծ խաւքարտի կտորի մը հա-
մար ահագին ազմուկ կը յարուցանէ և խն-
դիր մը եւս կստեղծէ Պատրիարքարանի մէջ
ուր ils ont d'autres chats à fouetter:

Այս տղայական միջադէպին ծնունդ տը-
ւող եկեղեցականը կը նմանի զօրավարի մը որ
պատերազմին ամենէն տաք պահուն գաղա-
րի փողը հնչեցնել պիտի տար վայրկեան մը, հա-
յեղին մէջ նայելու համար թէ ինչպիսի
տեղն է թէ ոչ:

Նորաստեղծ, արմաշաբոյր և ingénu վար-
դապետներ չաթալթազ կը դնեն եղբր, լա՛ւ,

որ է կողաչեմ, ասոր մնասը, որ այնքան
իրարանցում կը պատճառէ եկեղեցական շըր-
ջանակներու մէջ:

Ձէ՛, Սրբաղան, ձեր մանկունի խտտակրօ-
նութիւնը հեռուները կը տանի կոր ձեր աւան-
դամը կիրքը, կը մոլորեցնէ կոր ձեր պարտա-
ճանաչութիւնը և շատ տգեղ գաղափար մը կու-
տայ ձեր գործունէութեան մասին: Լաւագոյն
բանի մը համար վերապահեցէ՛ք ձեր օրհնեալ
զայրոյթը, բայց յանուն Աստուծոյ, ատանկ ջնջին
խնդիրներու համար խոչնդոտներ մի՛ հանէք
ազգին գործին մասին գնացքին դէմ, և շատ
խտտապահանջ մի՛ ըլլաք երիտասարդ վարդա-
պետներու դէմ, որոնք իրենց մատուցած
ազգային ծառայութեան միջոցին՝ մարդկո-
րէն քիչ մը luxur կը սիրեն:

Ազգը ատով չի կործանիր, մի՛ վախար:

ՎԵՐՅՈՒՇՈՒՄՆԵՐ

ՄԻՆԱՍ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

«Ճանչցա՞ր Մինաս Գափամաճեանը» կը հո-
ցունէր Անցորդ իր Պղտիկ էջերուն մէջ որոնք մօ-
տաւոր անցեալի մը բողբ վեր կ'առնեն՝ ցուցունէ,
լու համար մեզի ազգային կեանքի պատկեր մը, իր
բոլոր կրթութեան պայքարներուն, կուսակցական վէճերուն
մէջ հիմնականէն շատ աւելի երանելի:

Հին խորագրի ու վարժապետի խառնուրդ տի-
պար մըն էր Գափամաճեան, որ մէկէն միւսին կանց-
նէր անսպառ համբերութեամբ, ատոնց երկուքին
մէջ ու յաջորդելու և հազիւ ապրուստ մը ճարելով.
Իւթիւնեան կարգապետ՝ որ միայնակ կը տիրապետէր
ան ատեն լրագրական հրատարակին, Մասիսի բար-
ձունքին արհամարհանքով կը նայէր մաշած հագուս-
տով եւ իւրտ դէմքով այդ «պաշտօնակցին» վրայ
որուն միակ յատկանիւն էր — բայց ոչ արժանիքը —
իր կարողութեան կամ անկախութեան գիտակցու-
թիւնը չունենալը: Լոյսի խորագրերը գրելէ աւելի
կը քայլէր, Զարմաթըրդին մինչեւ Թուգիսի,
օրը բանի մը անգամ, հեւ ի հեւ, քրտնախոր, բա-
ժանորդի մը հանգիստելու յուսով. ու կը պատմէին
թէ շատ իրիկուն, տուն կը դառնար, Եկեղեցարու-
նէն գլուխը ո՛ր անեւ փողոցին մէջ, ողորդական
չեղումով մը մրմնջելով «Այս ազգին մէջ գահու-
թիւնը գնահատել չեն գիտեր. ապերախտ են»: Խո-
չոր ֆրոգներու մասնաւոր հակում մը ունէր. իր
«առաջնորդը» յօդուածները սովորաբար կը սկսէր
ազգային հրատապ խնդիրներուն վրայ փքուռոյց
տեսութիւնով մը, վերջացնելու համար... հարուստ-
ներուն ուղղութեամբ ջերմագին աղերսով մը իր բա-
ժանորդագրութիւնը: Երբեմն ալ, ճարտաստած, հան-
գանակութեան գլուխ մը կը բռնար:

Գափամաճեանը մեռաւ գնաց. բայց իր հա-
տատած գրութեան յետին հետքերը դեռ կը նըշ-
մարուին հոս ու հոն, ժամանակակից ու ինքնագով
լրագիրներու քով. ինչո՞ւ մեղադրենք խեղճ մարդը,
ան գոնէ համարձակ ըսելու արդարացումը ունէր

թէ իր անձին համար կուզէ, ապրուստին համար.
իր յաջորդներ, թէ եւ ցանցաւ թուով բարերարդա-
րար, փնջուն ու խորհրդաւոր երեւոյթներ կուտան
իրենց խմբագրական անվերջ հրաւերներուն. fondsը
միշտ նոյնն է. «Տուէ՛ք»:

* * *

Անցորդին այցի պատմութիւնը Զիւմայիլի խա-
նի կիսաւեր տապանին, այս տողերը գրողին ալ կը
յիշեցունէ նմանօրինակ այց մը՝ յօդուած մը հրատա-
րակել տալու եռանդէն աւելի մեծ պատրաստե-
տած ու շարադրութեան դասերուն «քաջալաւնե-
րէն» յախշտակուած: Գրեւոր անգուստ տենչ ունէի
Օր մը Գափամաճեանին հետ տեսնուեցայ, որուն
խկապէս ինչ ըլլալը չէի գիտեր: Խորագիր էր, եւ
րեսփոխան էր և դասադրքերու հեղինակ. այս եր-
բայի տիտղոսները բաւական չէին պատանի մը հմա-
լելու: Եկեղեցական ինքնավստահութեամբ մը ըսաւ.
ինձի ի՞նչ կարգաւոր, հարկաւոր ու խոստովանող
որուն արձագանգը դեռ յիշողութեանն մէջն է. —
«Լոյսի էջերը բաց են, պարո՛ն, քու առջիկ. ես նո-
րերը կը քաջայերեմ. տողի վրայ վճարու՞մով պի-
տի գրես. ձրի աշխատակցութեան կողմ չեմ»:

Ուրախութիւնս չափ ու սահման չունեցաւ. ի-
րաւարտութեան նախապատրաստական դասերու
կը հետեւէի ան ատեն. Droit romain և Code
civil մոռցայ շարադրելով. կը գրէի ու կը գրէի
անընդհատ. թարգմանութիւնով մը սկսայ որ իբրեւ
թերթին տպուեցաւ, — նորութիւն մը Լոյսին համար
ուր առաջին անգամ կերեւէր Տիւմա Որդիի անունը
վարժապետի ու թապալսի վէճերով լեցուն տաղտ-
կաւի գրուածքներու մէջտեղ. յետոյ, ալէն ձախէն
պղտիկ յօդուածներ խրկելու սկսայ որոնք չէին
մերժուեր «տէր և տնօրէն» էն. ի՞նչ վեհանձն մարդ,
կը մտածէի ինքնիրենս: Հազիւ տասնութ տարու
կայլ՝ դիւրախար, միամիտ, անխորձ: Եւ ուզելով
եւ ալ իմ՝ կողմէն հաճոյակատարութիւն մը ընել,
միտոյր գրի հաշուի չանցունէր ոտանաւորներս, — վտան
գի Մուսանէրու ճիւղն ալ մշակած էինք գաղղոյին մէջ.
և յետոյ, ի՞նչ անհուն հաճոյք մը կար՝ իրիկունը
մեր գեղին անկիւնը լուսնի լուսով պտոյտներուս
միջոցին, ծաղկաւոր դրացուհի մը կարենալ ըսելուն
մէջ «Օրիորդ, աս ոտանաւորը ձեզի ձօնած եմ
սրտէս»:

Բայց Գափամաճեան, որուն յայտնեցի թէ
լսանատեղծականները ձրի են, նեղայաւ:

— Ո՛հ, անոնց համար ալ պիտի վճարեմ, դո-
ւայ երեսիս:

Ամիսներ անցան այսպէս, և որ մը զգացի թէ
Զատիկուան «նոր լաթ»-ի պէտք ունիմ. երկշտ ան-
ուով մը մոտեցայ Մեկենասիս, յիշեցնելու համար
թէ...

— Հաշիւներդ արձանագրուած են տուժարնե-
րուս մէջ, ընդմիջեց, յարմար առթիւ մը կը նայիմ,
կը կարգադրեմ:

Ատեն մը ետք, երբ դիմումս կրկնելու հարկին
մէջ գտնուեցայ. — «Գոնձուցներ ունիմ ընելիք,
պատասխանեց՝ այս անգամ քիչ մը յօնքերը պը-
ղտուելով. ա՛ս ըստ անորդները խօսք չեն հասկը-
նար»: Ուրիշ օրեր, զբաղում, ակապիլ ցաւ, Պատ-
րիարքարան երթալու անապատանք, միշտ մէկով

նորագիւտ պատրուակ կը գտնէր, մինչեւ որ Լոյսը (անձնապատկեր) եղաւ անստապաւ թեւէ: Բայց իր հետ չի գտնուեցայ ըստ, — չէր արժեք, — ու մինչեւ վերջը, մեռնելէն թիչ առաջ, «Գաղափարաճանաչ Եփէնտին» երբ կը տեսնէի՝ կը մեծարէի զինքը, յիշելով թէ նախա- փորձերս իր թերթին մէջ բրած եմ:

* *

Հրապարակային կեանքի մէջ, Գաղափարաճանաչ պատուոյ տիրոջը կը համարէր խորագիրը ԸԼԼՈՒՆՆ ա. ւելի՛ երեսփոխան ԸԼԼՈՒՆՆ: Չեմ յիշեր ո՞ր թաղա- յին շրջանակէն ընտրուած էր, երբ և ինչպէ՞ս. բայց այնքան լըջօրէն կը մտնէր իր «Գաղափարաճանաչ» պա- տօնին կարեւորութիւնը, որ օր մը բացակայ չէր մնար, խորաբանչիւր նիստին առ նուազն տասն ան- գամ խօսք ուղեւոր ստիպարաւ կը մերժուէր ճար- տարութեամբ, կամ չորս-հինգ հարցաւորումով զի- զեղով զիւրանին վրայ որոնք չէին կարգաւորուած: Դո- թը չէր սակայն, բուռն էր որ յաջորդ օրը Լոյ- սին մէջ գրեւոր գոհունակութիւնը ունենար «Թեր- թիս տնօրէն-խմբագրութեան առաջարկութեան վը- րայ» Աղգային պատկառելի խորհուրդ . . . : Ատեա- նին բացումէն թիչ մը ետք ներս մտնելու սովոր- լութիւնն ունէր, երթալ բազմելու համար աջա- կորնան երեսփոխաններուն — հարուստ և ջոջ գա- սակարգին — մէջ, որոնց հետ en contact գտնուելու հազարապիստ ասիլով կուտար իրեն երեսփոխանի հանգամանքը և որոնք դուրսը հապիւ կը բարեկէին զինքը: Եւ ամեն անգամ որ բերանը բանար, սա տեսակ նախաբանով մը կը սկսէր «Վսեմափայլ պաշտօնակցիս . . . Եփէնտին իր պերճախօս տառ- նարանութեան մէջ յիշեց թէ . . .

— Դուն բոլ քանիքդ բռն, վերջացուց, կը պո- ռային ձախակոցմէն:

Եւ անձ, Գաղափարաճանաչ՝ որ ըսելիք մը չունէր արդէն, «Կը բողբոքեմ, ատենապետ փաշա, զիս ընդ- միջեւ իրաւունք չունին, խօսելու ազատութիւնս կը բռնարարեն» մը կարծակէր ու բարկացած կիջնոր բռնէն, ինքզինքը «գոհ» մը ցոյց տալով վսեմա- փայլներուն ու մեծարարութիւններուն. — այդ թուականին «ազնուաշուքը» ստեղծուած չէր տակաւին:

Օր մը փորձեց ինքն ալ հրաժարական տալ Ներսէս Պատրիարքին պէս որ ամեն անգամ աւելի փառքով և աւելի ժողովրդականութեամբ կը վե- րադառնար իր աթոռը: Լոյսի խմբագիրը մոռցած էր սակայն, բարեբաղդաբար, հաշտի դնելու իր և մեծանուն Պատրիարքին միջեւ համեմատութիւնները: Պատճառաբանեալ երկար հրաժարական մը զրկեց որուն մերժութեան վրայ վստահ՝ եկեղեցիին բան- կալը կը սպասէր որ բարապանները գտն հրաւիրեն զինքը ու յաղթական մուտք մը ունենար: Այդ բող- ձանքին չի հասաւ, առաջ՝ երեսփոխանները, վաղուց ծանծարայած, այնպէս փութկոտութեամբ օգտուեցան այս անակնկալէն, որ ատենապետը դեռ վերջին բառեր չի կորուցած, միաձայնութեամբ և ձե- ռամբարձ ընդունեցին «արդոյ երեսփոխանին» հրա- ժարականը: Քիչ մնաց շնորհակալութեան բռն ալ պիտի տային:

Գաղափարաճանաչի կեանքին մինչեւ վերջը խորունկ ցաւ մը եղաւ այս յուսահատութիւնը: Բայց ինք- զինքը միտնարեալ համար կըսէր, միշտ խորհրդա- րանական ոճով, «ձախակոցը կնդրիկ ըսաւ ինծի ղէմ»: Ու շատ անգամ, nostalgies բռնուած, կերթար կը խառնուէր ունկնդիրներու բազմութեան մէջ, ցաւագին ականակ մը նետելով ծաղովի չոր- ջափակին վրայ, — իր «գրական կորուսեալը»:

SURPՊԻՐ

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Բարիգէն, յեղափոխական մարմնի մը Պոլսոյ գոմիքէին կնիքը կրող սպառնական նամակ մը ուղղուէր է Տաւեան Արքիեպիս- յային, իրեն առեւանգեալ Բաղափական Ժո- դովի, զանգատելով անկից թէ «չանկեր ը- րած է զանազան գոմիքները լռօնելու հա- մար, եւ թէ այս ձեռնարկին մէջ՝ Պատրի- արք իրեն գործակից առած է»: Նամակա-

գիրը կամ նամակագիրները կառելցունեն թէ «իրեն գիտեմ իրենց թշնամիներուն»՝ ձեռքէն ազատելու միջոցը:

Եթէ սոցոց է այս լռօն գործարարական ֆանի մը թերթեր հրատարակելիս, գոնէ կը սիրենի հաւասար որ յեղափոխական մարմ- նի մը կամ կուսակցութեան մը գործ եղած չըլլայ, այլ պարզապէս անհասկերու կողմէ փորձ մը: Ամեն պարագայի մէջ, երկար բա- րակ խորհրդածոյքիւններով բացատրել հարկ չէ թէ ինչ աղետաբեր հետեւանկներ կրնայ ունենալ Պոլսոյ հայերուն համար մասնա- լորապէս. սպառնական նամակի դրոշման վերակառմը՝ մէկ կողմէ, եւ մարաֆաղափի մէջ յեղափոխական գոմիքի մը գոյութեան կասկածը՝ միւս կողմէ, բոլոր նստիկանու- րեան վայրագ հետապնդումները ու անկողի խոզարկութիւնները աւելի եւս արժանաւորելի ուրիշ բանի չեն ծառայեր: Պատրիարք, Վար- յոյրիս, ժողովուրդ կը շիրքին, կանաքեկին, ամեն վայրկեան երկիրի իսկ ու կասկածի եւրակայ. բանեւոր, արդէն իսկ անկողի հայերով յեղուն, կեղ կուգան նորագոյն ձեռքարկութիւններու առջեւ: Եթէ օրուան ֆաղափականութիւնը պահանջէ որ բոլոր թեր- թերն ալ, առիթէն օգուտ ֆաղելով, յեղու- նին փոխեն հայերուն դէմ, ա՛յ երեսակա- յեցէի թէ Պոլսոյ ու գաւառները ինչպէ՛ս կը մոլորեցին իսկաւ խառնակ: Եւ ինչո՞ւ այս ամենը. որովհետեւ ֆանի մը սափ-գոյիս պա- րուններու խելիքին փշեր է ազգասիրութիւն ծախել կամ ազգին ճակատագիրը վարելու յաւակնութիւններ ունենալ:

Տաւեանը ազգին թշնամի՞: Յոռեւե- սութիւնը եւ յախուռն ու անիրաւ դասա- սանը ծայրայեղութեան մղել չէ՞ այս տեսակ պատրուակներով վրդովել կեանքը ու գոր- ծունկութիւնը աղ պատրուակի հայուն եւ փորձ դիմանալիս որ արդէն իսկ այնքան փափակ դիրքի մէջ կը գտնուի:

Չանձոյթի, զայրոյթի ու երկիրի ըզ- զացումը որ ազգին առիթ մէջ կը տրեւ յե- ղափոխական արարքներու դէմ, վերջին դառն փորձերէն ետ, անգամ մը եւս կը սասկա- նայ, ու տրտմութիւնը կը պատ ամենու:

Եւ յետոյ, մի՛ մոռնա՛ք որ եթէ Արքիե- փաշա վշտացած ու դառնացած՝ ֆաղափ Վար- յոյրեան գրովի գործարարական շրջանայեաց կերպով կը վարէ, նուրեան մը կրնայ յայտ- դել անոր:

ԱԼՖՈՆՍ ՏՕՏԷ

Սաւոյ, Խարբարեմի և ուրիշ շատ մը վիպական հրաշակերտներու հեղինակ՝ Ալֆոնս Տօտէ, հինգ-շաբթի օր մեռաւ ի Բարիլ:

Պրանսական գրականութեան փառքերէն մին էր մեծանուն վիպասանը որուն ամեն մէկ նոր գործին երեսունը évenement մըն էր գրա- սէրներու և ընթերցողներու աշխարհին մէջ:

Վերջի ժամանակներս արդէն քաշուած կեանք մը կանցունէր իր տկարութիւնը դար- մանելով, միեւնոյն ատեն կարողութիւնը նաեւ գրական գոհարներ թէ՛ գրքի ձեւով և թէ՛ հանդէսներու մէջ:

«Սաֆօ»՝ իր գլուխ-գործոյններէն մին,

օրէնքային վերածուեցաւ: Մասնէի երաժշտու- թեամբ և այդ օրերային առաջին ներկայա- ցումներու միջոցին, որոնք ահագին յաջողու- թիւն գտան, իր սիրելիներէն շրջապատուած հազին աւանդեց Տօտէ:

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

Ժ.

ԲԵՐԱՏԻ ԿԻՆԸ

Պոլսոյ բարիգոնէները:

Բայց այնքան բարիգոնէի որքան Մեթաքսա- թօնեանքը՝ թօնեաք. դուրսէն կրնար խորոխը, բայց մէջը նայելու չի գար. չի կարծուի սակայն թէ Բե- րայի կինը ներսին խնամք չի տանիր որքան դու- րսին. ընդհակառակը, Բերայի կինը, երբ հագ- ունելու կեղծ՝ ձերմակերպներու մեծ հոգ կը տանի, իրեն անանկ կուգայ որ փողոցին մէջ անպատճառ պիտի խնայ, գլուխը վար և ոտքերը վեր:

Կրնայ ժառուր աշխարհաբան գիտնալ, բայց դի- մար գէշ կը խօսի տիրացուական չգիտեմ ինչ մը չունենալու համար և կը սիրէ մատ մը պակաս աշ- խարհաբար գիտնալ Գաղա-գիւղի կիններէն մատ մը վեր ըլլալու համար:

Ամեն իրիկուն, օդը բայց եղած ատեն, Թագու- մէն մինչեւ Պօն Մարշէ կը բազէ և իրիկունը ուշ տուն կը վերադառնայ իր պարտականութիւնները անթերի կատարելու մը գոհացումով:

Իրեն համար աշխարհէր Մատամ Պէկէի խանութ- թին կը սկսի և Լիբանթիւրիկի տարկներուն առջեւ կը վերջանայ:

Երբեք-գալորը մէկ երբեք չանցնիր՝ իւսկիւ- տարցի չի կարծուելու համար:

Բերայի մէջ կան կիններ որ դուստի մը ինչչալս ծիծ տալու է չեն գիտեր, բայց հատ մը չէք գըտ, ներ որուն անձանթ ըլլաւ Թուլ հեկա, Թիօքը, ա- պարաւը, մեծագոյն բոթիներուն անունը և Քօն- քօրիտի վերջին երգը:

Բերայի մէջ վստայող անպարկեշտ կիններն զանազանուելու համար, փողոցին մէջ անանկ մը կը բողբոքեն որ պարկեշտը՝ անպարկեշտին հետ չփոխել կը փորձուի:

Տուններուն մէջ բոնիքուն, բայց փողոցն են օրն ի րուն:

Սերկիւրայիներուն պէս, մեր պատկած ատենը կարծնան և vice versa:

Ճրանեւէն մը կը խօսին զոր միայն խանութ- պանները կը հասկնան:

Տասնըչորս տարու աղջիկ մը 30 տարու կնիկն մը հովերը ունի և քառասուն տարեկան կին մը տա- նութիւն տարու աղջիկն:

Ուգած ատեններն կը պատուան:

Կը ծխեն, կը խաղան, կը ծաղրաւորեն, կը փլիւ- թեն, էրկիւնեն հետ ամիսներով բէն կը պահեն, բանբոսանք չեն փոխար, այսու հանդերձ աւելի զիւրին է երեսուն կին խաղել խաղաղի կամ Մարքի գիւղի մէջ բան մէկ հատ մը ի Բերա:

Եթէ վերցունես Բերայէն՝ Բեթի Դանը, Պօն Մարշէն, Թէմիսիոյին, Հաճօքուր խանը, Մատամ Բերէն, Բիկմալիւնը, Սքլանիւրը, և Միլեան Տէր Հայը, Բերայի կինը պիտի խաղիկը ջուր չի տես- նող ծաղիկ մը պէս:

Արատամիտ և քիչ շատ երազականացեալ, սակայն «խաղաղիկ» բաճանան իր աղօթագրքերու մեծագոյն մասը Բերա կապուէ որ սակայն ամենէն նուազը կարծիքն:

Միտենին ծուր ըլլալ մարդու ծիւր կուե- ցունէ, անանկ չէ՞ Տիկին:

ԹԱՏԱՄԵՍ

ՕՐԱՑՈՅՑ

1898 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանու- թեան կողմէ պատրաստուած այս Օրացոյց կը ծախուի Փարոսի տպարանը ի գին 60 փա- րա ողջ:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն գեղեցիկներ 10 թուականով հաւելալական թիւը թերուն ուղղուած է հետեւեալ հեռագիրը զոր արտատպեցին տեղական բաւարարը:

«Անցեալ երկուշաբթի, երկու չէքքէզ զօրքեր բռնուեցան երկուրդի մէկ քէօշլին դրան առջեւ, ուր Սուլթանը պիտի երթար քիչ ետք Սաքա Սլթէնպուրկի էնէսգէ իշխանն ընդունելու: Իսկոյն պալատը չընկալուեցաւ զօրքերէ, և գիշերանց նաւեր զրկուեցան իսկիւ տար ուր ձերբակալութիւններ կատարուեցան: Կըսուի թէ երկու չէքքէզները գործադրիչներն էին Ապտուլ Համիտի կեանքին դէմ դաւադրութեան մը, բայց պատահած է յաճախ որ պարզապէս զօմէտի մը եղած ըլլայ այս պալատական սպայի մը կողմէ սարքուած, պարգեւ ստանալու համար»:

—Իտալական թերթերը կը հաղորդեն թէ Գերմանիոյ կայսեր այցելութիւնն ի Կ. Պոլիս և երուսաղէմ, որ յառաջիկայ ապրիլին տեղի պիտի ունենար, հակառակորդին յետաձգուեր է:

—Կրէտէի հիւպատոսներն հեռագրեր են իրենց գեսպաններուն թէ կղզիին ժողովուրդը, իտալներն ալ միասին, չընդունիր Պօզո Բէդրովիչ իշխանին ընտրելութիւնը զոր կը պաշտպանէ Ռուսիա: Անոցա Տին Հանեայի մէջ ապստամբները կրակ ըրեր են Գիսամբի ամբարանին վրայ, որուն օտմ: պահապան զօրքն ալ փոխադարձաբար: Հրացանաձգութիւնը տեւեր է մէկ ժամ: Սփաքիայի մէջ ալ հազար ապստամբ պաշարեր են Բէրլինը քրիստոնեայ գիւղը՝ սպաննութեան մը վրէժը լուծելու համար: Արիւնահեղ կռիւ մը տեղի ունեցեր է:

—Կ. Պոլսոյ օտար նամակաւորանց տնօրէնները գեկու Տին գումարում մը ունենալով որոշել են հաւաքական նամակ մը ուղղել գեսպաններուն խնդրելու համար որ միջազգային թղթատարական պայուսակներն ապաւան օտմ: պաշտօնեաներուն ձեռքէն որոնք նամակները կը բանան և արժէքաւոր նիւթերը կը շրջեն: Տնօրէնները կը պահանջեն որ այդ պայուսակներ պոկկարական սահմանագրուէն մինչեւ Պոլիս՝ կնքուի վաւերացման փոխադրուին:

—Չէթինէն կը հեռագրեն իտալական թերթերուն, թէ Ալպանիոյ ապստամբութիւնը կը շարունակուի: Սուլթանին կողմէ զըրկուած պատուիրակին՝ Բիզա պէյի բանակցութիւնները, ապստամբներուն հետ, երբի մը չեն յանգեր: Այս վերջինները չեն ուզեր անպայման կերպով հնազանդութիւն յայտնել և կը մերժեն իրենց եղած հրաւերը՝ Կ. Պոլիս երթալով անձամբ յայտնելու իրենց գանգատները:

—Հաւասի հեռագիր մը ծանուց թէ Յունաստան առաջարկեր է Դրան՝ ամիս մը երկարաձգել հաշտութեան դաշնագրին վաւերացման պայմանաւոր: Երկրորդ հեռագիր մը կաւեցունէր թէ Աթէնքի մէջ հանրային կարծիքը նպաստաւոր չէ դաշնագրին և այս պատճառաւ է որ հերքէ կառավարութիւնը վաւերացման յետաձգումը խնդրել է:

վսինալով որ խորհրդարանին մէջ պարտութիւն մը չի կրէ: Ասով հանգերձ, առերեւոյթ տեղի տալով տէրութեանց դիտողութիւններուն, այս հինգշաբթի օրուան համար ի նիստ հրաւիրած էր Երեսփ. ժողովը:

* * *

Երէկ իրիկուան հեռագրիւններուն նայելով, այս քննադրութեանց ոչ մէկին տեղի չէ մնացեր, վստիկ Վուլին, Յունաստանի Ազգ. ժողովը, առաջին ընթերցումով ընդունել է հաշտութեան դաշնագիրը, զոր միեւնոյն ժամանակ Սուլթանն ալ վաւերացուցեր է:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Կ. Պոլսէն կը հեռագրեն նայէ Ֆրայէ Բրէսէին թէ Օրմանեան Պատրիարքը բողոքեր է եթանասունըհինգ հայերու կամայական կերպով բանտարկուած մնալուն դէմ, որոնք դաւադրութիւն ըրած ըլլալու սուտ ամբաստանութեան տակ կը գտնուին և մինչեւ այսօր և ոչ իսկ հարցաքննութիւն կրած են իրենց ձերբակալութեն ի վեր որ չորս ամիս կայարգէն:

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՅ ԼՍԱՐԱՆԸ

Կը յիշեցունենք մեր ընթերցողներուն թէ այս գիշեր տեղի պիտի ունենայ Ընթերցասիրայ Ընկերութեան Երգ լսարանը ուր պիտի առնուի Տիար Գ. Շանթի, իրեն նիւթ ունենալով «Նեղոսի աղիւթն» մինչեւ Միջերկրական:

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր. Խալիլը այս առաւօտ Ապտինի պալատը գնաց իր երկշաքաթական ընդունելութիւնը կատարելու:

—Եգիպտական բանակին սպարապետ Քիշնէր փաշա Պէրպէր ուղեւորեցաւ նախընթաց օր:

—Հինգշաբթի գիշեր Ապտինի պալատին մէջ պաշտօնական սեղան մը արուեցաւ ի պատիւ Մէդէնիի կամին, Աւստրիոյ դիւանագիտական գործակալաւոր որ կը մեկնի Եգիպտոսէն:

—Սիւէզի ջրանցքին վարչական խորհուրդին նախագահ Արէնպէրի իշխանը իր որդւոյն հետ Բօռ Սայիտ հասած է և այսօր Գահրէ կը սպասուի:

—Նախարարական որոշմամբ, արտաքին գործոց պաշտօնատան դիւաններուն անօրէն Պոլսապուս պէյի ամսականը բարձրացած է 55 ոսկիի, և «առջիվանդ» դիւանին պետ Շէրիտեան Կարապետ պէյի ամսականը՝ 30 ոսկիի: Նոյն որոշման համեմատ, թարգմանութեան դիւանին պետ կարգուեր է Արթին էֆէնտի Ստեփան, 28 ոսկի ամսականով (հանգուցեալ Միհրան էֆ. Մէլիքեանի տեղ):

—Փառ Տէլիսանսի Գահրէի թըղթակիցը կը հեռագրէ թէ «հանրային կարծիքը զայրացած» կը պահանջէ որ կառավարութիւնը անմիջական միջոցներ ձեռք առնէ Էյրալի Էլամ անուն կեղտոտ թերթին դէմ որ անպատկառ հրատարակուած թիւներ կընէ Բարձր. Խալիլին և անոր «Բարձր. մօր դէմ»:

—Գառական նախարարութեան խորհրդական Սըր Ճօն Աթթ այս իրիկուն Ձաւազիկ կուղեւորի վաղը Ներկայ գտնուելու համար Փարուսի դատարանին բացման, և քրննութիւն մը կատարելու համար Ձաւազիկի տեղական դատարանին վրայ:

—Ապուրիի մէջ անգլիացի Պ. Վէլը և իր ձիապանը սպաննած ըլլալուն համար ամբաստանուած եօթը տեղացիներուն դատը 13 օրէ ի վեր Աղեքսանդրիոյ տեղական դատարաններու նիստերը կը զբաղեցնէ:

Երկու կողմի փաստաբանները իրենց դատավարութիւնները վերջացուցած ըլլալով, այսօր վաղը վճիռը կը արուի:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԵՆԻՈՅԹ

Վաղը գիշեր Ապու-Խալիլ թատրոնին մէջ պիտի ներկայացուի բոլորովին նոր թատերգութիւն մը ԽԱՂԱՄՈՒԼ՝ գործ Իտալացի Նըշանաւոր հեղինակ Կօլտօնիի:

Թարգմանիչը Տիար Երուանդ Գաղանձեան մեծ զոհողութիւններ ըրած է խաղին յաջողութիւնը երաշխաւորելու համար: Կը սիրենք յուսալ թէ թատերասէր հասարակութիւնը պիտի փութայ ներկայ գտնուիլ այս երեկոյթին, տեսնելու համար նոր քիւս մը և քաջալերելու համար երիտասարդ թարգմանիչը իր անգրանիկ ձեռնարկին մէջ:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Աթէնք, 17 Դեկտեմբեր. — Խորհրդարանական յանձնախումբը սա եղրակացութեան յանգեցաւ թէ պէտք է քննութիւն մը բանալ «Էթնիքի Էթէրիա»ին սրաքննելուն վրայ:

ԼՈՆՏՈՆ, 17 Դեկտ. — Պուրէֆ անուն ուսուր Պօ Սթրիթի առեանին առջեւ դատի կանչուեցաւ նիհիլիսթական թերթերու մէջ հրատարակած յօդուածներուն համար սրով Ձարը սպաննելու կը թեւադրէ:

Քօթ ԽՕԱի կառավարիչ Սըր Ռ. Մաքսուէլ մեռաւ շոգեհաւին մէջ, Քանարեան կղզիներուն մօտ, Անգլիա ուղեւորած միջոցին:

ՊԵՐԼԻՆ, 17 Դեկտ. — Վիլհէլմ կայսրը երէկ իրիկուն այցելութիւն տուաւ Պիլմարք իշխանին:

Մեր ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք ԲԱՍՓԱԼ մեծ վաճառատան ծանուցումին վրայ որ մեր այսօրուան յաւելուածին մէջ հրատարակուած է:

ՎՐԻՊԱԿ. — Փարոսի նախորդ քիւի Օրուան լուսերուն մէջ Սըր Մ. Հիւս Պիլի համար սպագրաւ կան պիսով մը բսուած եր քի Պիլսի մէջ ասեւ նախօքս և որ պիսի ըլլայ Պիլսը:

ԲԱՐԻՉԵԱՆ ԲԱՐՔԵՐԵՆ

ԻՐՄԱԻ ԶԵՐՄԱԿԵՂԵՆԵՐԸ

Կուղէք որոշ գաղափար մը ունենալ բարիգեան բարբերու վրայ, աչքէ անցուցէք վերջի սուրհանդակով եկած լրագիրները:

Տրէյֆիւսի դատը նորութիւն մը չէ ձեզ համար. խորհրդարանին, կառավարական շըրջանակներուն, արձարաններուն, փողոցին և մամուլին մէջ ահագին աղմուկ հանեց այդ

